ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Առաջարկություններ

‹‹Վիճակախաղերի մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին›› ՀՀ օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-013-12.02.2019-ՏՀ-011/0) վերաբերյալ

1. Առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածով առաջարկվող 5.2-րդ հոդվածի առաջին մասը լրացնել նոր պարբերությամբ՝

«Լիցենզիա ունեցող վիճակախաղի կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատորի յուրաքանչյուր կազմակերպիչ Հայաստանի Հանրապետության մարզերի յուրաքանչյուր վարչական կենտրոնում և Երևան քաղաքի յուրաքանչյուր վարչական շրջանում կարող է կազմակերպել մեկ բուքմեյքերային գրասենյակ կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատոր՝ կրթական և պատմամշակութային օջախներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հեռավորությամբ և չափանիշներին համապատասխան տարածքներում»:

2. Առաջարկվում է նախագծի 7-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

2. Սույն օրենքի 5.2-րդ հոդվածի 1-ին մասը գործում է մինչև 2022 թվականի հունվարի 1-ը, բացառությամբ նույն մասի 2-րդ պարբերության, որը գործում է մինչև 2021 թվականի հունվարի 1-ը:

3. Սույն օրենքի 5.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությամբ սահմանված նորմը տարածվում է միայն մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը լիցենզիա ստացած վիճակախաղի կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատորի կազմակերպիչների վրա:

4. Սույն օրենքի պաշտոնական հրապարակման պահից վեց ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է բուքմեյքերային գրասենյակների կամ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատորի կազմակերպմանը ներկայացվող տարածքային, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մարզերի յուրաքանչյուր վարչական կենտրոնում, Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի վարչական սահմաններում, Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի վարչական սահմաններում, Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի վարչական սահմաններում, Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում և Երևան քաղաքի յուրաքանչյուր վարչական շրջանում կրթական և պատմամշակութային օջախներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հեռավորությամբ և չափանիշներին համապատասխան հեռավորության վրա գտնվելու չափորոշիչները»:

5. Սույն օրենքի պաշտոնական հրապարակման պահից վեց ամսվա ընթացքում լիազոր մարմինը սահմանում է խաղասրահ մուտք գործել և ինտերնետային կայքում գրանցվել ցանկացող ֆիզիկական անձի անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթն ստուգելու կարգը եւ «Վիճակախաղերի մասին»

օրենքի 5.1-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված քաղաքացիների վերաբերյալ տվյալների բազայի վարման կարգը: